ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հունվարի 2022թ N 3/Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՄԵՆՔ ԿԱՆԳՈՒՆ ԵՆՔ ՄԵՐ ԼԵՌՆԵՐԻ ՊԵՍ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 3-րդ բաժնի 15-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի հունվարի 28-ին՝ ժամը 11:00-ին, Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի դահլիճում Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անցկացնել «Մենք կանգուն ենք մեր լեռների պես» խորագրով ասմունքի մրցույթ:

2. Հաստատել մրցումների անցկացման հանձնաժողովի կազմը՝

1) Ղուլյան Արտակ - հանձնաժողովի նախագահ,
2) Ղահրամանյան Նաիրա - քարտուղար,
3) Պետրոսյան Արմեն - հանձնաժողովի անդամ,
4) Գրիգորյան Գայանե - հանձնաժողովի անդամ,
5) Այվազյան Աննա - հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի նախագահ Արտակ Ղուլյանին՝ ներկայացնել ամփոփիչ փաստաթղթերը:

4. Ֆինանսատնտեսագիտական վարչությանը՝ հաստատել մրցումների անցկացման ծախսերը՝ 207.500 (երկու հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, և

մրցույթի անցկացման հետ կապված բոլոր ծախսերը կատարել ըստ հաստատված նախահաշվի:

5. Սույն հրամանի պահանջների կատարման պատասխանատու նշանակել նախարարության աշխատակազմի ՆՀՊ և ԱԾ վարչության պետ Ստեփան Օհանջանյանին:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավար Շավարշ Սարգսյանին:

Լ. Ղարախանյան